



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 16/21**

12.07.2021թ.

ք. Երևան

ՀՀ քաղաքացի Հարություն Խաչիկի Փափագյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 15-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող նորմում պարունակվում է իմպերատիվ պահանջ առ այն, որ եթե հաստատվել է ՀՀ ոստիկանության ծառայողի կողմից վարչական իրավախախտման կատարումը, ապա վերջինս վարչական պատասխանատվության փոխարեն կրում է կարգապահական պատասխանատվություն: Օրենսգրքի 15-րդ հոդվածի ուժով, եթե վարչական մարմինը հաստատված է համարում ՀՀ ոստիկանության ծառայողի կողմից վարչական իրավախախտման կատարումը, ապա օրենքի ուժով պետք է նյութերն ուղարկի ՀՀ ոստիկանությանը՝ կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելու համար:

Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության ուժով ՀՀ ոստիկանության ծառայողները վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական պատասխանատվություն:

Նշված հոդվածի 2-րդ նախադասության համաձայն՝ որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնները խախտելու, մաքսային կանոնները խախտելու, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի

օրենսդրության պահանջները խախտելու համար սույն մասում նշված անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով:

Այսպիսով, Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասը կարգավորում է 2 խումբ իրավահարաբերությունները՝

1. ՀՀ ոստիկանության ծառայողները վարչական իրավախախտումների կատարման համար ենթակա են կարգապահական պատասխանատվության

2. որսի, ձկնորդության և ձկան պաշարների պահպանության կանոնները խախտելու, մաքսային կանոնները խախտելու, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահանջները խախտելու համար սույն մասում նշված անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով:

Դիմողի դիրքորոշմամբ՝ համադրված վերլուծությունից հետևում է, որ Օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված հայեցողական լիազորությունը վերաբերում է 2-րդ խումբ իրավահարաբերությունների, հակառակ պարագայում իմաստագրվում է Օրենսգրքի 15-րդ հոդվածի ողջ տրամաբանությունն այն առումով, որ 1-ին մասով նախատեսված լինի իմպերատիվ պահանջ ոստկանության ծառայողներին վարչական իրավախախտման համար ենթարկել կարգապահական պատասխանատվության, իսկ 3-րդ մասով իրավասու մարմնին վերապահի հայեցողություն այս առումով:

Ներկայիս իրավակարգավորման և դրան ստորադաս դատարանների տված մեկնաբանության պարագայում հստակ չէ՝ արդյոք ՀՀ ոստիկանության ծառայողները ենթակա են վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված բոլոր հոդվածներով, թե վկայակոչված օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված զանցանքներ կատարելու համար: Անորոշ է այն հարցը, թե արդյոք ՀՀ ոստիկանության ծառայողի կողմից վարչական իրավախախտում թույլ տալու դեպքում վարչարարությունն իրականացնող մարմինը պարտավոր է գործն ուղարկել ՀՀ ոստիկանություն՝ ծառայողի կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու համար, թե ունի հայեցողություն:

Վերը նշված հիմնավորումներով Դիմողը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին:

Օրենսգրքի վիճարկվող նորմի՝ 15-րդ հոդվածի բովանդակությունը հետևյալն է.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և ոստիկանության ու փրկարարական ծառայության հանրապետական գործադիր մարմինների ծառայողները, զինծառայողները, ինչպես նաև գորահավաքների կանչված զինապարտները վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական պատասխանատվություն: Որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնները խախտելու, մաքսային կանոնները խախտելու, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահանջները խախտելու համար սույն մասում նշված անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով: Որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնները խախտելու, մաքսային կանոնները խախտելու համար նշված անձանց նկատմամբ տուգանք չի կիրառվում: Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահանջները խախտելու համար նշված անձանց նկատմամբ տուգանք չի կիրառվում, եթե իրավախախտումը կատարվել է ծառայողական տրանսպորտային միջոցներով:

Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանցից բացի մյուս անձինք, որոնց վրա տարածվում է կարգապահական կանոնադրքերի կամ կարգապահության վերաբերյալ հաստուկ կանոնադրությունների գործողությունը, դրանցով ուղղակիորեն նախատեսված դեպքերում վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական, իսկ մնացած դեպքերում վարչական պատասխանատվություն՝ ընդհանուր հիմունքներով:

Սույն հոդվածի առաջին մասում նշված դեպքերում այն մարմինները (պաշտոնատար անձինք), որոնց վերապահված է վարչական տույժեր նշանակելու իրավունք, կարող են տույժեր նշանակելու փոխարեն իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար:

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:*

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:*

Այսպես, Դիմողը հանդիսանում է ՀՀ ոստիկանության ծառայող, որը գտնում է, որ ոստիկանի կողմից վարչական իրավախախտում թույլ տալու դեպքում վերջինիս նկատմամբ պետք է կիրառվի ոչ թե վարչական պատասխանատվության միջոց, այլ կարգապահական՝ հիմք ընդունելով վիճարկվող նորմի 1-ին մասը:

Օրենսգրքի 15-րդ հոդվածը կարգավորում է վարչական իրավախախտումներ կատարելու համար զինծառայողների և մյուս այն անձանց պատասխանատվության հետ կապված հարաբերությունները, որոնց վրա տարածվում է կարգապահական կանոնադրքերի գործողությունը:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Կարգապահական խախտում (զանցանք) է համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ոտնձգող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար սույն օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական խախտում է համարվում նաև սպայական կազմի զինծառայողի կողմից հաշվետու կամ ուսումնական տարվա արդյունքներով ծառայողական գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ սպայի պատվի կանոնների խախտումը: Սպայի պատվի կանոնները սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

2. Սույն օրենքով նախատեսված իրավախախտումների համար կարգապահական պատասխանատվություն առաջանում է անկախ այն հանգամանքից, որ այդ խախտումները իրենց բնույթով առաջացնում են քրեական պատասխանատվություն:

3. Վարչական իրավախախտում թույլ տված զինձառայողները պատասխանատվության են ենթարկվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝

Ծառայողական քննություն նշանակելու առիթներն են՝

դ) ոստիկանության ծառայողի կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն կազմված արձանագրությունները.

Ծառայողական քննությունն, ըստ ՈՀայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին՝ օրենքի 2-րդ հոդվածի, նշված օրենքով և «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով սահմանված դեպքերում և կարգով ոստիկանության ծառայողի պարտականությունների կատարմանը, նրա գործունեությանն ու դրսևորած վարքագծին առնչվող հարցերի քննությունն է:

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքն, անդրադառնալով կարգապահական տույժերի տեսակներին, սահմանում է, թե որն է կարգապահական խախտումը, մասնավորապես, ըստ նշված օրենքի 42-րդ հոդվածի՝ կարգապահական խախտումը ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունների սահմանն անցնելու դեպքերն են:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ վարչական պատասխանատվությունը և կարգապահական պատասխանատվությունը լիովին տարբեր իրավական կատեգորիաներ են: Ինչպես իրավաբանական պատասխանատվության ցանկացած տեսակ, այնպես էլ վարչական պատասխանատվությունը և կարգապահական պատասխանատվությունը կոչված են կարգավորելու որոշակի խումբ հասարակական հարաբերություններ: Մասնավորապես վարչական պատասխանատվությունը համարվում է իրավակարգի և օրինականության ապահովման միջոց, այն ունի առանձնահատուկ նորմատիվ իրավական հիմք և կիրառման պայմաններ, վարչական պատասխանատվության հիմքը բացառապես

վարչական իրավախախտումն է, որն ուղեկցվում է վարչական հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Այլ կերպ ասած՝ վարչական պատասխանատվությունը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված իրավասու պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված հիմքերով և կարգով վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ վարչական տույժերի նշանակումն ու կիրառումն է:

Օրենսգրքի 15-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և ոստիկանության ու փրկարարական ծառայության հանրապետական գործադիր մարմինների ծառայողները, զինծառայողները, ինչպես նաև զորահավաքների կանչված զինապարտները վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական պատասխանատվություն: Նույն հոդվածի 3-րդ մասն, իր հերթին, ամրագրում է, որ սույն հոդվածի առաջին մասում նշված դեպքերում այն մարմինները (պաշտոնատար անձինք), որոնց վերապահված է վարչական տույժեր նշանակելու իրավունք, կարող են տույժեր նշանակելու փոխարեն իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար:

ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշման մեջ արձանագրել է. «7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

2014 թվականի ապրիլի 18-ի ՄԴՈ-1148 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. «6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը:»:

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՄԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և ոստիկանության ու փրկարարական ծառայության հանրապետական գործադիր մարմինների ծառայողները, զինծառայողները, ինչպես նաև զորահավաքների կանչված զինապարտները վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական պատասխանատվություն, մինչև ժամանակ, «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտում թույլ տված զինծառայողները պատասխանատվության են ենթարկվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

Վերլուծելով Օրենսգրքի 15-րդ հոդվածը, տեսնում ենք, որ նույն հոդվածի 1-ին մասը որոշակի խումբ անձանց համար վարչական իրավախախտումների դեպքում նախատեսում է կարգապահական պատասխանատվություն, մյուս կողմից նույն հոդվածով վարչական մարմիններին իրավունք է վերապահում տույժեր նշանակելու փոխարեն իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար: Միաժամանակ, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ թվարկված են այն զանցանքները, որոնց համար տվյալ խումբ անձինք վարչական պատասխանատվության են ենթարկվում ընդհանուր հիմունքներով: Արդյունքում, պարզ չէ՝ տվյալ հոդվածով նշված անձինք ենթակա են վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված բոլոր հոդվածներով, թե Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված զանցանքները կատարելու համար՝ վարչական պատասխանատվության, մնացած դեպքերում՝ կարգապահական:

Այսինքն՝ գործող կարգավորումն հնարավորություն չի տալիս տվյալ խմբի անձանց վարչական իրավախախտում թույլ տալու դեպքում կանխատեսել՝ իրենց նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառվելու են, թե ոչ, քանի որ եթե դիտարկենք միայն վիճարկվող նորմի 1-ին մասը, ապա կարգապահական պատասխանատվությունն անխուսափելի, պարտադիր պահանջ է, նույն հոդվածի 2-րդ մասն առանձնացնում է վարչական իրավախախտումների որոշ տեսակներ, որոնց համար նշված հոդվածով նշված անձինք ենթարկվում են վարչական

պատասխանատվության, իսկ նույն հոդվածի 3-րդ մասով կարգապահական պատասխանատվության հարցը թողնված է վարույթն իրականացնող վարչական մարմնի հայեցողությանը:

Վերոգրյալով պայմանավորված՝ կարելի է եզրակացնել, որ վիճարկվող նորմով ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորում չի նախատեսվում, այնպես էլ դրա կանխատեսելիությունը չի ապահովվում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը մի կողմից՝ հնարավորություն չի տալիս անձին դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, մյուս կողմից՝ կանխատեսելու, թե ինչպիսին կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ինչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

Ավելին, ինչպես վերևում արդեն իսկ նշվեց, կարգապահական պատասխանատվությունը և վարչական պատասխանատվությունը միմյանցից էականորեն տարբերվող ինստիտուտներ են, և մեկը մյուսով պայմանավորելը կամ մեկով մյուսին բացառելը չի բխում Սահմանադրության նպատակներից և խնդիրներից: Ուստի, իրավական պետությունում, հաշվի առնելով, որ մարդը և նրա իրավունքները բարձրագույն արժեքներ են, անհրաժեշտ է անձի համար պատասխանատվություն նախատեսող նորմերը ձևակերպել հնարավորինս հստակ, մատչելի, տարակարծությունների տեղիք չտվող:

Միաժամանակ, գտնում ենք, որ սույն գործով դիմումն ակնհայտ անհիմն է, և գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Միաժամանակ, նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ 1) գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր: Այնուհետև, նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Իսկ նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ...:

Սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 որոշման համաձայն՝ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե անձի սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալվում սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: Մասնավորապես, նշված որոշման համաձայն՝ «... դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր՝ ...: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո, դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս չի ներկայացրել բավարար հիմնավորումներ վիճարկվող նորմի կամ դրա վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մեկնաբանության հակասահմանադրականության արդյունքում իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման և

վիճարկվող դրույթի կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

Արդյունքում, գտնում ենք, որ սույն գործի շրջանակում ներկայացված անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին համապատասխանության վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման:

 Recoverable Signature

Համակարգող՝ **X** Lyudvik Davtyan *Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169